


9.

571

891.995
9-64



891.991

Գ-64

30 MAY 2011

ԱՄԱՆՈՐ



ԿՈԴԱՆԴԱՎԻՐ

Հայ Թարոնցականներու



ԳՐԵՑ

ՅՈՒՂԱՆՆԵՍ ԳՄՔԵԹԵԱՆ



Կ. ՊՈԼԻ-

ՏՊԱԳՐՈՒԹԵԻՆ

Մահմետ Յ. Գօշումեան

1914



ՅՈՒՂԱՆՆԵՍ ԳՄՔԵԹԵԱՆ
ՀԱՅ ԹԱՐՈՆՑԱԿԱՆ ՀԱՅ ԹԱՐՈՆՑԱԿԱՆ
ՀԱՅ ԹԱՐՈՆՑԱԿԱՆ ՀԱՅ ԹԱՐՈՆՑԱԿԱՆ



ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Յ. ԶԱՀԻԿՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ՄԵՐ ՄԻՐԵՑԱԼ ՊԱՏՐԻԱՐքը

ՅԵՂԻՆ ԵՐԳԸ

Զարդի՛ք, զարդի՛ք, խընդուն ոռղի՛ք հայկազեան,
Ծափ ու ծրմծդայ եկուորին:
Որ նոր արփի մ'արփաւեսել մեր վիրան,
Կուզայ խանդով մ'անձկագին:

64 554-68

Մեր սրտերուն վիրաւոր,
Բեր յոյս եւ յոյս անսահման.
Նոր կեանի ցեղիդ դարաւոր,
Ննորհէ Զաւէն Սրբազնի:

Հայրենաւանդ հորիզոնին գեղանոյշ,
Սիւներուն հետ Եփրատի.
Լազող ցեղիդ խինդ ու ժրադիս, կեանի քընեու,
Բեր որ հոգւոյն մեջ կարի:

Մեր հոգիին ա'լ աճրեւ՝
Բեր սփոփանի յախենան.
Նոր հախաւաններ, նոր արեւ,
Ննորհէ Զաւէն Սրբազնի:

Վեր սրբանալ կ'անձկայ Յեղը, Վեր, շատ վեր,
Արծիւ հնուու համիննեն.
Եօրն Երկիննեն խրիւ փառի դափնիններ,
Յաղբանակներ նրեղին:

Ապրիլ կուզէ Հայն յաւէս,
Ապրիլ խաղաղ, անսասան,
Աւիւն ու խանդ շունչիդ հետ,
Ննորհէ Զաւէն Սրբազնի:



ՄՈՒՐԱՑԻԿԻՆ ԿԱՂԱՆԴՅ

(Պատմուածք)

Դեկտեմբերի վերջին օրն էր, ձմրան ցուրտ և
բուրոս գիշեր մը: Զիւնը, անդադար կը տեղար
ամպոս երկինքէն, և կատղած քամին վայրի գայ-
լերու պէս կոռնար, աերեւազուրկ ծառերուն ձեր-
մկած հասակները մինչև գետին կորացնելով: Փո-
ղոցները արգէն ամայացած էին: Ամէն մարդ քաշ-
ուած իր տունը, կաղանդի զարդարուած սեղանին
շուրջ, անհոգ անվիշտ, նոր ապրին կը տօնէր: Ա-
մէն տունէ, ամէն պատուհանէ, ուրախութեան եր-
գեր կը լսուէին, զուարթ քրքիչներու մէջէն:

Սակայն այդ պահուն մեծ փողոցին անկիւնը
թշուառ աղջիկ մը երեցաւ: Իր նիհար մարմինը,
աղտոս քուրջերու մէջ վաթթած, ցուրտին տակ
դողալով դողդզալով, փայտացած ոտքերուն վրայ,
մերթ իյնալով, մերթ ելլելով կը քալէր, արցունքը
աչքերուն մէջ: Մուրացիկ աղջիկ մըն էր, անտուն
անտէր դուրսը մնացած, անողոք ցուրտին տակ:
կաղանդի ուրախութենէն բաժին չունէր թշուառ:



Աստուն կանուխ , արշալոյսին , առանց վախունալու կծու և խայթող ցուրտէն , փազոց ինկած էր ,
մուրալւ պատառ մը հաց ճարելու համար : Հիմայ գիշեր էր եղած և ոչոք ողբամած էր իրեն : Խեղա
աղջիկ : Քանի քանի հարուստ գուռ զարիած էր ,
ամէնքն ալ վանտած էին զինքը , գուռը երեսն ի վեր գոցելով : Գլուխը կախած , խորունկ հառաչանք
մը քաշելով հեռացած էր : . . .

Ժամանակ մը կար որ ինքն ալ երջանիկ ու
բարեբախս էր ուրիշներու ալէս : Ինքն ալ Հայրիկ
ու մայրիկ ունէր : Սակայն գացին անոնք : Հայրիկը
գործարանին անելութ մէքենային տակը մեռած էր :
Թշուառ աղջիկը կը յիշէ հայրիկին թաղուիլը , մայ-
րիկը շատ լացաւ անոր փրայ , և ամիս մը ետքը
հիւանդ ինկաւ : Շատ չանցաւ , թոքախար իր ձան-
կերուն մէջ խեղդեց սիրելի մայրիկին կեսնքն ալ
և ինք անէ ետք անտեր մնաց , փողոցներուն մէջ
թափառող մուրացիկ մը :

Անօթի էր հիմայ , ուր երթար , որո՞ւ զիմէր ,
մարզոց սրակերը քարացած էին :

Ուժքը ալ չէին բաներ , ինելքը՝ կը գառնար
աչքերը կը մթնէին : Կը սոսկար զժբաղդ աղջիկը ,
կը սոսկար ցուրտախն տակ , ձիւնին մէջ սառելէն :
Դիակը հոն պէտի մնար անհոգ , անպաշտական . մին-
չե լոյս սև ագռաւները պիտօք փորէին պաղած աշ-
քերը : . . .

Յանկարծ կեցաւ : Հեռուէն կառք մը կը մօտե-
նար իրեն : Մըցունքը սրբեց , ժպիտ մը անցաւ թաց

աչքերուն մէջէն : Ո՞վ կար արդեօք այդ կառքին
մէջ : Անշոշատ հարուստ աղնուական մը , իրեն պիտի
ողբացէր , պիտի աղատեր զինքը անգութ մահէն :
Կառքը մօտեցաւ :

— Ողբացէցէ՞ք , Աստծու սիրուն , գոչեց գժ-
բազդ մուրացիկը , բայց ձայնը մարդ չլսեց , քամին
ուժով կ'ոռնար , խեղդեց անոր ձայնը :

Կառքը աւելի կը մօտենար , աղջիկը աւելի
ուժով կը պոռար , բայց անօգուտ , լսող չկա՞ր :
Փախչիլ ուղեց , սակայն ուժերը կարծես զետնին
գամուած էին : Զկրցա՞ւ :

Աստուած իմ , գոչեց Լեղապատառ . . .

Կառքը անցա՞ւ :

Սուր ճիչ մը , տիսուր աղաղակ մը յանկարծ
քամիին ոռնոցին միացաւ : Կառքը կանգ առաւ :

— Տէ՛ր , թշուառ , մուրացիկ , աղջիկ մը , ձմ-
լուած անիւներուն տակ , ըստ ծերուկ կառապանը
խռպոտ ձայնով մը :

— Մուրացիկ մը , քեզի ի՞նչ , պոռաց ներսէն ,
հարուստ աէրը . քչէ՛ շուտ , հիմա ինձի կըսպասեն . . .

Կառապանը սոսկումէն քարացած , լսունցք-
ները մութին մէջ սեղմեց և խրոխտ ձայնով մը
պոռաց .

— Անխեղճ հարուստ , քու քու . կառքդ ջախ-
չախեց աղջկան գլուխը , գոնէ անոր դիակին մեղ-
քցի՛ր . . .

Եւ դիակը գրկելով մութին մէջ անյայտացաւ :

* *

Լուսցա՛ւ

Աղքամափկ թաղին եկեղեցին կոչնակը տխո՛ւր
մը դողմանչեց: Ո՞վ էր մեռեր: Անաէր դժբախտ մը
անշուշտ: Գիշերը կառքին տակ ջախջախուած մու-
րացիկ աղջիկն էր: Ոչ ոք կար եկեղեցին մէջ:
Միայն ծերուկ կառապանը, արցունքի շիմեր աչ-
քերուն մէջ, հետևեցաւ անոր մինչև գերեզման:
Բարի մարդը լացաւ թշուառ մուրացկանին գերեզ-
մանին վրայ, մրմնչելով.

— Մահը իր կաղանդի նուէրը եղաւ . . . :



ՏՂԱՆ ԵՒ ԾՆՈՂՔԸ



ԿԱՂԱԿԱԴ

Նոր Տարի է, Ամանո՞ր,
Ծափ ու պատիւ, փա՞ռք անոր,
Որուն կենասու ժիբերէն կարին,
Հոգւոյս մեջ աւիւն, խանդ ու կեանք կարին.
Դուն ինձի կեանք ես տուեր,
Մա՞յր, սիրս ունիմ մեզ նըւեր:


Նոր Տարի է, նո՞ր Տարի,
Տըլո՞ն, կեանիրդ երկարի,
Եկո՞ւր մայրիկիդ, ձեռքը համբուրէ,
Մայրիկդ ալ հակասդ որ սէր կը բուրէ,
Տաքուկ կուրծին սեղմած պինդ,
Երգէ կեանիք պարն ու խինդ:

Նոր Տարի է, օր բարի,
Սիրեմ հայրիկս ալ կարի.
Որուն անքապան ջանիովն անձանձիր,
Վիշտ հոգ ու տալտուկ կըրլան ցանուցիր.
Երդիմնուս վրայ առյաւես՝
Հա՞յր, խինդ սրփուկ՝ փառիդ հետ:

Նո՞ր տարի է, նո՞ր կաղանդ,
Տրդա՞ս, մեզի ուժ ու խանդ.
Վաղն երբ ծերանալ խոնջենես պարտուած,
Նեցուկս ըլլաս դուն, Օրինենք մեզ Ասուած.
Տրդա՞ս, փառէս ևս անադար,
Քեզմով հայրիկն է հրապար:



ԶԱՐՄՈՒՀԻ



(Ծնունդի Պատմութիւն)

— Ինչո՞ւ անոնք աղքատ են և մենք հարուստ...
Եւ Զարմուհի վեղձկեցաւ. սկսաւ բարձրածայն
հեկեկալ :

Հակառակ որ Ծնունդի Խթման գիշերն էր և
տանը մէջ բերկրանք ու ժպիտ կը տիրէր, Զարմու-
հի 12-13 տարեկան աղջնակ մը, խորունկ թափ-
ծութեան մէջ լնկդմած, տրամադիր չէր երեցած
Ընդհանուր ոգեզրութեան մասնակից ըլլալու :

Ուրիշ տարիներ Զարմուհի համար Ծնունդի
տօնը գիւթական թուլանք մը և սրտի աննկարա-
գրելի խայտանք մը ունէր: Ինչքա՞ն հրապուրիչ էին
նուէրները: Մասնաւորապէս այն ընծան, որ կէս
գիշերին, իր կօշիկներուն մէջ գնել կուգար Յիսուս
մասուկը:

Զարմուհի, այս տարի, նոյնիսկ՝ ամայի վո-
ղոցներուն մէջ Աւետին երգող աղոց խումբերու
ձայնը չէր լւած: Անոնք քանի հեղ բախեցին իրենց
գուռը և սակայն պղտիկ աղջիկը, խորասուղուած
իր մասածումներուն մէջ, չնկատեց այդ:

Իր ծնողաց համար անակնկալ մին էր եղած
այս երեւոյթը:

Հայրը գեղեցիկ պուլպիկ մըն էր նոսիրած իւրեն և սակայն Զարմուհի, արցունքու աչքերով, մ՛կդի նետած էր նուէրը և մրմիջած:

— Չեմ ուզեր հայրիկ:

Սեղանին վրայ քիչ էր կերած, առանց խօսելու: Հակառակ մօրը ջանքերուն՝ կարելի չէր եղած բառ մ'իսկ կորզել իր բերնէն: Ամէն անգամ որ իր տիւրութեան պատճառը հարցուցած էին. Զարմուհի լացած էր, կուրծքին տակ կուտակուած. յուզումը յանկարծ գուրս ժայթքեցնելով ուժգնօրէն:

Ի՞նչ ունէր անմեղ աղջիկը: Զէին հասկցած:

Եւ հիմա, ճաշէն ետք, երբ Զարմուհի, կարձես լնկճուած իր մանուկ հոգին չարչըկող վշատէն, մօրը գրկին մէջ, քունէն յաղթուած, աչքերը կը փակէր, մայրը համբուրելով անոր անրիծ ճակատը, վերջին անգամ, ցած ձայնով հարցուց.

— Զարմուհի՛ս, հրեշտակու, ի՞նչ ունիս:

Զարմուհի ա՛լ չկրցաւ զսպել ինքզինքը և լաւլահաւաչ ձայնով մրմիջեց.

— Ի՞նչու անոնք ալքատ են և մննք հարուստ... Հայրն ու մայրը բան մը չհասկցան այս խօսքէն և ապշահար իրարու երես նայեցան:

— Ո՞վ է ալքատը, զաւակու, հարցուց հայրը: Զարմուհի աչքերը բացաւ.

— Մարիամ խաթուննք հայրիկ, որոնց ալքատ խրճիթը մեր ճոխ տանը դէմն է:

Եւ Զարմուհի պատմեց.

— Մարիամ խաթուն, իր թոռնիկին, պղտիկ

Լուսիկին հետ եկեղեցի էր եկած այսօր: Տեսնես խեղճ աղջնակը հայրիկ, խեղճ կուսիկը, ոսքը բուպիկ էր և զլուխը բաց: ցուրտէն կը գողար: Զիս տեմսելուն պէս երեսը անդին դարձուց. հասկցայ որ իր աղքատութենէն կ'ամէնար: Մօտեցայ իրեն:

— Ի՞նչ կընես, կուս'իկ, հարցուցի:

կուսիկ զլուխը կախած մըմնջեց.

— Մէծ մայրիկիս հետ եկեղեցի եկայ: Մէծ մայրիկս բառ որ երթեանք աղօթենք Աստուածամօր պատկերին առջեւ որ այս գիշեր մեզի հաց տայ, անօթի չառոկինք... .

Զարմուհի նորէն փղձկեցաւ: Յորդ արցունքը խեղճեց իր ձայնը կոկորդին մէջ: Հայրը և մայրը լուսիթիւն մը պահեցին.

Զարմուհի աչքերը սրբելով շարունակեց.

— Գիտեմ, մայրիկ, զիտեմ որ հիմա կուսիկը և իր մէծ մայրը անօթի պառկած են, մինչդեռ մենք հոս ամէն բան ունինք ուտելու: Ի՞նչո՞ւ անոնք աղքատ են, իսկ մենք հարուստ մայրիկ, ի՞նչու ո՞նոնք Ծնունդը չեն տօներ գոնէ սրասառ մը չոր հացով, իսկ մենք համազաներ կը ճաշակինք... .

Զարմուհի զլուխը կախեց, լուս և անխօսուկ:

— Աստծու կամքն է, աղջիկս ըստ հայրը: Աղջկան միտքը չկրցաւ ըմբռնել այդ բացաւըինը:

— Աստուած բարի է, հեծեծեց, թերես մարդիկ են որ այդպէս կ'ինեն: Հայրիկ ևս կուզեմ մեր ուրախութենէն բաժին մը տալ անմաց, կուղեմ որ

մեր բերկրանքին անոնք ալ մասնակից ըլլան : Թող
անոնք ալ Ծնունդ տօնեն ուրախ զուարթ :

Մայրիկը ջերմ համբոյր մը զրոշմեց աղջկան
ճակտին և նոյն պահուն երկու շիթ արցունք փայ-
րեցան անոր աչքերուն մէջ , մինչդեռ հայրը աղջր-
ուած մանկան ըմբոստ ողիէն , գոչեց .

— Ապրի՞ս , աղջի՞կս , դուն հրեշտակացին սիրտ
մը կը կրես կուրծքիդ տակ :

* * *

Ծնունդի առտուն էր :

Զարմուհիի անրիծ դէմքին վրայ ուրախութեան
ժպիաներ կը փայրէին : Հայրիկը առտուն կանուխ .
Երբ գեռ Զարմուհի կը քնանար , Մարիամ խաթունն
ու իր թոռնիկը՝ Լուսիկը , իրենց տունն էր քերած ,
Ծնունդը միասին անցընելու համար : Զարմուհի քը-
րոջ մը պէս կը գուրգուրար Լուսիկին վրայ , մինչ
Մարիամ խաթուն կ'օրհնէր զինքն ու իր ծնողքը .
այս բարիքին համար :

Մինչև իրիկուն Զարմուհի և Լուսիկ ուրախ
դուարիթ խաղացին , ինդացին ու երգեցին :

Դիշերը երբ Մարիամ խաթուն , թոռնիկին
ձեռքը բռնած , պատրաստուեցաւ մեկնիլ . իրենց
աղքատիկ հիւզակը , Զարմուհի համրուրելով Լուսի-
կը , մայրիկին հաւանութեամբ , աղքատ աղջկան
վզէն կախեց մարգարտէ ապարանջանը և գիրկը
տուաւ այն աղւոր պուպիկը , զոր հայրիկը իրեն
նուիրած էր նախորդ գիշեր :

Զարմուհի հիմա երջանիկ կըզգար ինքզինքը և
երբ խեղճերը մեկնած էին , մօրր վիզը իննալով
հարցուց .

— Գո՞հ եռաւ անուշիկ մայրիկս :

❖❖❖❖

ԱՍՏՈՒԱԾԱՄԱՅՐԸ



Գիշերուան խաւարին ու մթութեան մէջ , այ-
րին մութ որմերուն տակ , Աստուածամայրը , Յիսուս
մանուկը զրկած , մայրական կաթողին սիրոյ բո-
վանդակ խանդովն անսահման , օրրերդներ կը հի-
մէր , անուշ և գեղանոյշ :

— Քնացի՞ր որ մեծնաս աչքիս լոյս , մեծնաս
ու զրանաս

Դուն հայակերտ պալատի մը մէջ չծնար , ճոխու-
թեամբ շշապատուած , շղարշներու և բեհեղներու
մէջ : Յուրատէն անպատճպար մարմինդ , մօրկանդ
կուրծքին ջերմութիւնը միայն տեսաւ : Թշուառ ծր-
նար : Քնացի՞ր որ մեծնաս , հոգեա՛կս , մեծնաս ու
գօրանաս : Վաղը ճամբուդ վրայ փառքեր քեզի կըս-
պասեն . . .

Աստուածամայրը լսեց : Ու նոյն պահուն ան-
ծանօթ ձայն մը , ականջն ի վար փափսաց .

— Ի՞նչ փառք, հէք մայր, զաւակդ դժբախտ
ձնաւ, իր կեանքն ալ գժբախտ պիտի ըլլայ . . .

Մայրը սարսաւց և մանուկը ամուր մը սեղմած
կուրծքին վրայ հեծեծեց.

— Դժբախտութիւնն իսկ պիտի ըլլայ բովան-
դակ փառքը իր կեանքնին, քանզի այդ դժբախտ
կեանքն է որ պիտի երկնէ երջանիկ կենցաղը բովան-
դակ մարդկութեան: Քնացիր որ մեծնաս աչքիս
լոյս. մեծնաս ու զօրանաս . . .

Լուռութեան մէջ նոյն ձայնը կրկնին լսուեցաւ.

— Ի՞նչ փառք Հէք մայր, սամժանակիր կեանք
մը կըսպասէ սիրասուն զաւկիդ: Բոսպիկ ոտքով փու-
շերու և տատասկներու վրայէն պիտի քալէ, արիւն-
լոյս ու յոդնած, խոնջած գլուխը պասասպարելու-
տեղ միսկ չգտնելով:

Աստուածամայրը դողաց և աւելի ուժով գրկեց
զաւակը կուրծքին վրայ: Կաթոզին համբայր մը զը-
րումեց անոր ճակտին և արցունքի երկու շիթեր
աչքերուն մէջ, մրմիջեց.

Քնացիր որ մեծնաս, աչքիս լոյս, մեծնաս ու
զօրանաս: Փուշերն ու տատասկները արիւնդ թող
քամին, հողին արգանդին մէջ հոսող արիւնդ աղա-
տութեան դափնիներ պիտի ծլարձակէ . . . Քնացիր
որ մեծնաս, հոգեակս, մեծնաս ու զօրանաս: Քու-
տաժանակիր կեանքիդ մէջ, մայրիկդ քեղի զօրո-
վիդ ու նեցուկ պիտի ըլլայ: Եւ պիտի մեղմեմ ցա-
ւերդ, վերքերուն սպեզանին պիտի գտնեմ, քեզի
պիտի հետեւիմ ուր որ երթաս. . .

— Բայց ոչ մինչեւ գերեզման, հեղնեց նոյն
ձայնը, խաւարին մէջ, բայցոչ մինչեւ գերեզման:
Ի՞նչ փառք, դժբախտ մա'յր, իշտառ ու տաժա-
նակիր կեանքիդ մը վերջ, զաւակդ քու ձեռքեղ խրլ-
ուած, չոր խաչափայտին վրայ, վայրագարոր պի-
տի խաչուի, պիտի մեռնի . . .

Աստուածամայրը ցնցուեցաւ և մանկիկը աւելի
պինդ սեղմալով կուրծքին վրայ, աղաղակեց.

— Խաչը քու փուռքդ է զաւա՛կս, խաչն վրաց
պիտի մեռնիս: Խաչիդ ստորոտը բլինի, զամ' այն
օրը, հպա՛րու, ոչ թէ նկուն, ժպիտը գէմքիս վրայ,
արցունքի և լացի տեղ: Երիբմիդ քոյլ երեք օր,
երեք զիշեր ե՛ս պիտի աղօթեմ ու երեք օր ետք
գիտեմ, Հոգեա՛կս, զիտեմ . . .

— Գիտես որ մանը պիտի յաղթէ զահմ Յա-
րութեամբը և իր շիրմին մէջէն, սարուկ մարդկու-
թեան Ազատապրումի Պատգամը վե՛ր, վե՛ր պիտի
ճախրէ:

Աստուածամայրը ժպակեցաւ, մինչ նոյն պահուն
Յիսուս մանկան զէմքը երկնային լոյսով սպողուել յաւ:

ՀԵՂՏԵՐ - 67





ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Պատերազմի տարի էր : Հայրենիքը արին կուշար : Գունդերով կ'երթալին զինւորները՝ գէպի սահմանագլուխ, արիւնի ու կոսի մէջ յաղթանակներ կերակելու :

Անոնց մէջ էր նաև որսորդ Սագօն, գիւղին, նշանաւոր կորիծը, որ գիւղացւոյ սիրական փառքն էր : Սագօն ոչ հացը ունէր, ոչ ալ մայր այլ միայն քոյր մը, Սաթենիկը, զոր հիմա մինակ կը թռ-

զուր ու կ'երթար, թերես ալ չգալու համար : Զէս պատերազմի մէջ մահը ուրուականի պէս կը սաւասնի գլուխէ գլուխի :

Սաթենիկ շատ ու շատ լացած էր, սակայն ինչ օգուտ : Անոր արցունքները Օրէնքին ուժին առջեւ ոչինչ արժած էին ու սիրական եղբայրը հիմա կը տանէին : Պիտի տեսնէր զայն անդամ մըն ալ, Աստուած գիտէր :

Սաթենիկ՝ գիւղացիներու բաղմութեան մէջ խառնուած, մինչեւ գիւղին ծայրը գնաց, նայուածքը գամած Սագօնի վրայ և երբ ամբոխը կանգ առաւ ու զինուորները կամաց կամաց սինեւ կըլլացին, Սաթենիկի աշքերէն արցունքի ատք շիթերինկան այսերն ի վար ու գլուխը կախ, սիրաը խոցուած անտէրունջ որբի մը բոլոր դասնութեամբ, տուն վերադարձաւ : Խեղճ աղջի՛կ...

* * *

Երկու շարաթ հազիւ անցած էր այդ օրէն և գիւղացիները, օր մըն ալ, զարմանքով ու վախով տեսան Սաթենիկի անյայտացումը գիւղէն : Բոլոր փնտուուքները զուր անցած էին, Սաթենիկ չէր գանուած : Ուր գացած էր, ուր էր կորած, ոչ ոք գիտէր :

— Աստուած բարին կատարէ, կըսէին ծերունիները : Մինչ կարիծ երիտասարդները ասզին անդին կ'ինացին, զանելու համար Սաթենիկը :

Ամիսներ անցան, տարի մը անցաւ, բայց ի զուր, Սաթենիկը չկրցան գանել և բոլորն ալ յու-

սահատ, Աստծու կամքին յանձնեցին ամէն ինչ:

Ոչ ոք հասկցած էր Տշմարտութեանը: Ոչ մէն կուն մտքէն անցած էր թէ Սաթենիկ, զիշերուան կիսուն, բանած էր այն ճամբան ուրդէ գացած էր Սագօն իր ընկերներով: Սաթենիկ զիմած էր զէպի պատերազմ, կամ եղբօրք հետ վերադառնալու և կամ անոր հետ մեանելու համար:

* * *

Պատերազմը սոսկալի էր: Թնդանօյները կը գոռացին անեղօրէն և անոնց ծուխին ու մուխին մէջէն, գնդակները կարկուաի տարափի պէս վար կ'ինային: Դիավոները կը փառէն ու արիւնէն մարդկանած ձիերը, պազած մարմիններու և մահումներձ վիրաւորներու կողերը ջարդելով կը վազէին:

Կոխը կը շարունակուէր:

Սագօ անոնց մէջ էր: Քաջաբար կը կոտէր: Աչքերը կարմրած էին...

Սակայն որհն մը անոր ձեռքերը թուլցան: Գրալուխը կախեց: Ինչո՞ւ հառաջեց Սագօն: Ինչո՞ւ անոր աչքերը մասյլացան, ինչո՞ւ ծունկերը կիթունան, ինչո՞ւ Սագօն վար ինկաւ:

Զարսուած էր....

Կրսխը կը շարունակուէր մօլեպնօրէն: Սագօի արիւնը կը հոսէր և ուժերը կամաց կամաց կը լրքէն զինքը:

Յանկարծ սակայն կանացի շունչ մը զբաց դէմքին վրաց: Աչքերը լոյն մը բացաւ:

— Սաթենիկ, Քայր իմ, որմնիցից:

— Սագօ, եղբայր իմ, ըստ Սաթենիկ:

— Կը մեանիմ, Սաթենիկ:

— Տուր ինձի զբնքերդ, Սագօ, տուր վրէժդը լուծեմ:

Եւ եղբօրք հրացանը գրկած կաւողներու շարքին մէջ նեաւաւեցաւ:

* * *

Քայր ու եղբայր, կուշտ կուշտի մեռան: Սաթենիկ իր փափաքին հասած էր: Պատերազմին ողջ ազատած զինուոնները երբ գիւղ վերազարձան, պատմեցին ամէն ինչ:

Գիւղացիները կրաէին.

— Փառքի իրենց, մեր սրաները իրենց գերեզմանն...:

ԳԵՂՋՈՒԿԻԿՆ ԵՐԳ

Սեւ աշխի զնօսուկ, գեղջուկին նոզին,

Մատաղ աշերուուկ.

Նայէ՛ սա՛ արտիս, կենդանի անզին,

Դիտէ՛ զայն անփոյք:

Պինդ լուծը ուսիդ, նոյն ակօսեցիր,

Զամենդ մը ուժզին.

Հումսին հետ զեղջուկին յանձնեց երիկին իր ների արզանդին:

Առաւ արգանդը, եկունդի ցաւով, Փայտեցաւ Ասուած.

Բարձրացան և ա՛ հասկեր նովի նով,

Գրախնին կախած.—



Գլուխնին կախած, կ'ողջունեն ընդ փոքր՝
Գեղջուկին թշին,
Մեկտեղ դատեցանի, յարզա՛նի կոչերուը,
Լուծին արզասի՛:
Յորեններուն տակ, արտոյնին վրսեմ,
Երգն է խնդապին.
Եկո՞ւր, գուշուկ օան. ճակատդ պազնեմ,
Փառք Աշխատանինին:

ՃԱՄԲՈՐԴՈՒԹԵԱՆ ՄԵԶ



(ՆՈՐԱՎ. ԵՊ)

Ֆրանսացի հեղինակաւոր գրագէտին, Կի Տի
ՄՕԲԱՌԱՆԻ այս նողերանական գեղեցիկ նորագէ-
պը, պատշաճ՝ յապաւումներով, թարգմանարար կը
ներկայացնենք սատրիւ:

Դակոնը լեփ լեցուն էր մինչեւ Կան:
Կը խօսակցէին, բոլորն ալ զիրար կը ձանչնա-
ցին: Երբ անցան Թարասքօնը, անոնցմէ մէկը ըստաւ.
«Հոս է որ՝ կը սպաննեն»:

Եւ սկսան խօսիլ այն խորհրդաւոր և անբժիշ-
նութիւն մարդախոչոչումի մասին, որ երկու տարիէ ի
վեր, մէրթ ընդ մէրթ, երեւան կ'ելլէր հոն, ձան-
բոզի մը կեանքը խելու համար: Ամէն ոք ենթա-
գրութիւն մը կ'ընէր, յայսնելով իր կարծիքը: Կի-
ներն սարսալով կը զիտէին խաւար գիշերը, ապա-
կիներուն ետեւ:

Ամէն ոք պզափի պատմութիւն մը ունէր շր-
թունքին վրայ, իր ինքնագովութիւնը ընող: Ա-
նոնցմէ խւրաքանչխւրը, զարմանահրաշ գէպքերու
մէջ, չարագործ մը վախցուցած և զգեսնած էր,
հրաշալի խելացիութեամբ և յանդգնութեամբ մը:

Բժիշկ մը որ առէն ձմեռ անկէ կ'անցնէր ու-
զեց, իր կարգին, արկած մը պատմել.

— Ես, բառ ան, երբեք ասիթ չեմ ունեցած
այդ կերպ գործերու մէջ ուժո փորձել, բայց ճանչ-
ցած եմ կի՞ մը, իմ յաճախորդներէս մին, որ հի-
մա մեռած է և որուն պատահեցաւ անդամ մը աշ-
խարհի ամենէն եղական գործը, յայժ խորհրդաւոր
և սրտաշարժ միտնդամայն :

«Մուս կի՞ մէն էր ան, կոմսուհի Մասի Բա-
ռանով, բարձրահասակ տիկին մը, սքանչելի գե-
ղեցիւթեամբ :

«Կոմսուհին բժիշկը, շատ աարիներէ ի վեր,
տեսնելով այդ կնոջ տասապիկը կուրծքի սոսկալի
հրամագութենէ մը, կ'աշխատէր համոզել զի՞նքը
Թրանսա գալու բայց ան կը մերժէր Բեթերա-
պուրկէն հեռանալ :

«Աերջապէս, անցեալ աշնան, բժիշկը այդ պա-
րագան տեղեկացուց ամուսոյն, որ արտօնուց իր
կի՞նը մեկնիլ գէալի Մանթօն :

«Կասախսումին մէջ, առանձին վակոն ունէր
տիկինը, մինչ սպասուորները յասուեկ մասնաբաժ-
նի մէջ կ'աշխատէին : Մինակ կը մնար, և ախուրը,
շատ ախուր էր, դիտելով քաղաքներու և դիւդե-
րու անցնիլը, ինքինք կղզիացած կրպքար, միս
մինակ, առանց ծնողքի, առանց զաւկի, ամուսնի
մը հետ մխայն, որուն ուրբ մեռած էր և որ զի՞նք
կը ձգէր այսպէս աշխարհի մէկ ձայրը, առանց իր
հետ գալու : Կարծես ծառաց մին էր որ հիւանդա-
նոց կը զրկուէր :

«Եւրաքանչիւր կայարան հասնելուն, իր ս-

պասաւորը՝ իվան կուգար հարցնելու թէ աիր-
ուրին արդեօք բանի մը կը կարօտի : Իվան
ծերուեկ մին էր, կոյր բայց անձնուէր, պատրաստ
կասարելու կոմսուհին բոլոր հրամանները :

«Գիշերուան սասւերներն ինկան, մինեց : Վայ-
րաշարժը սոսկալի ուժգնութեամբ կը յառաջանար:
Կոմսուհին քունը չէր տաներ : Զղայնացած էր ան:
Յանկարծ մատածեց համբել վերջին պահուն ամուս-
նոյն իրեն յանձնած զրամը : Բացաւ պղտիկ քսակը
և ծունկերուն վրայ թափեց մեսազեայ հեղեղը :

«Սակայն յանկարծ օդի ցուրտ հոսմանք մը գէմ-
քին զարկաւ : Գլուխը վերցուց : Դուռը կը
բացուէր : Կոմսուհին չտարած, իսկոյն լաթ
մը նեւեց զրամներուն վրայ և սպասեց : Քա-
նի մը վայրիկեաններ անցան և ահա՛ մարդ մը երե-
ւեցաւ, զլուխը բաց, ձեռքէն վիրաւորուած, որ
կը հեւար : Դուռը գոցեց մարդը և նստաւ զիսելով
զրացուհին, իր փայլուն աչքերով : Թաշկինակով
մը փաթթեց արիւանների բռունցքը :

«Դեռասափ կի՞նը վախէն ուշաթափում կ'զգար:
Այս մարդը անշուշտ տեսած էր իր սոկինները համ-
բելը և եկած էր հիմա զի՞նք սպաննելով զրամները
գողնալու :

«Մարդը զայն կը զիսէր չնչառապատ կարծես
պատրաստ ըլլար իսկոյն վրան իննալու :

— «Մի՛ վախնաք, տիկին, բսաւ յանկարծ :
«Կոմսուհին չտարասխաննեց, չէր կրնար բերա-
նը բաժան, սիրալ ուժգնորէն կը արոտէր :

— «Ես չարագործ մը չեմ, տիկին, շարունաշեց մարդք:

«Տիկինը դարձեալ չէր պատասխաներ, սակայն յանկարծ շարժում մը ցնցեց իր սրունքները և ոսկիները, գորգին վրայ սկսան թափիլ, հսոսգ ջուրի մը պէս:

«Մարդը զարմացած կը նայէր այս մետաղեայ առուակին: Իսկոյն ծռելով սկսաւ ժողվել զանոնք:

«Կոմսուհին շփոթած, ոսքի ելաւ, դանապաշին վրայ վազելու համար: Մարդը հասկցաւ թէ Բ'նչ կ'ուզէ ընել ան և իսկոյն նստեցուց զինք:

— «Մտիկ բրէք, տիկին, ես չարագործ մը չեմ և ասլացոյցը այն է որ հիմա կուզեմ հաւաքել ձեր գրամը և ձեղի յանձնել ես կորսուած մարդ մըն եմ կամ աւելի ճիշդ, մեռած մարդ մը, եթէ չօգնէք ինձի սահմանադրուխին անցնիլ: Ես ձեղ աւելին ըսել չեմ ուզեր: Մէկ ժամ ետք պիտի համինք ուռսական վերջին կայանը և քիչ յետոյ պիտի հեռուանք պիտուիթեան սահմանին: Ես ոչ մարդասպան եմ: ոչ աւազակ և ոչ ալ գող մը, տիկին ու պատոյս հակառակ ուեէ անսպառչած ընթացքի մէջ չեմ գտնուած երբէք՝ կ'երդնում, տիկին, կ'երդնում: Զեմ ուզեր աւելին ըսել ձեղի:

«Եւ սկսաւ հաւաքել ոսկիները, չը մոռնալով նոյնիւկ մինչեւ հեռու անկիւնները գլորած վերջին հատերը:

«Աւ յետոյ երբ կաշեաց պիտիկ քսակը դարձեալ լիցուած էր: առաւ զայն զրացուհին, առանց

խօսք մը ընելու և գնաց նստաւ վակօնին մէկ ուրիշ անկիւնը:

«Երկուքին ալ և ոչ մին կը շարժէր: Կոմսուհին անշարժ և համբ, սարսափէն տակաւին շահմահարուած կը մնար, տակաւ սթափած:

«Մինչեւ միւսը, ուղիղ նստած, և նայուած քը առջեւը սեւեռած, արձանացած էր, բոլորովին գեղնած, մնուելի պէս:

«Մերթ ընդ մերթ կոմսուհին խիստ ակնարկ մը կը նեաէր անոր վրայ: Երկուն տարեկան մարդ մըն էր, յոյժ գեղեցիկ և չնորհալի մարդու բոլոր երեւոյթներով օժառուած . . . :

«Կառափառամբը թանձր խաւարին մէջ կը վազէր հեռալով և զիշերուան մէջ իր սուր սուլոցները արձակելով: Մերթ գնացքը կը գանդաղէր և մերթ բովանդալ ուժգնութեամբը կը սուրար:

«Բայց յանկարծ զանդաղեցաւ, սուրեց քանի մը հեղ և կեցաւ:

«Իվան երեւյաւ զրան վրայ:

«Կոմսուհին զողպաջուն նայուած քով մը վերջին անցամ մըն ալ զննեց իր օտարական լոկերը և յետոյ դարձաւ իր ծառային:

«— Իվան ըստաւ, գնա՞ , վերագարձի՛ր կոմսին քով, այլեւս քեզի պէտք պիտի չունենամ . . . :

«Իվան բացաւ աչքերը ապած ու մընչնեց.

«— Բայց, տիկին . . . :

«Կոմսուհին շարունակեց.

«— Ոչ զուն չպիտի գտա, ես միտքս փոխե-

ցի: Կ'աւզեմ որ զուն Ռուսաստան մնաս: Ա՛ռ,
ահսւասիկ քեզի գրամ, վերադարձիր համար: Տո՛ւր
ինծի գլխարկդ և վերարկուդ...»

«Եր սպասաւորը հանեց վերարկուն և տուաւ:
Վարժուած էր ան հնազանդիլ առանց պատասխանելու ու ենթարկուիլ տիրուհին կամքին և հրամաններուն:

«Իվան հեռացաւ, արշունքը աչքերուն մէջ:

«Կառախումբը շարժեցաւ, վազելով դարձեալ
ընդ առաջ:

«Այս ատեն կոմառնին ըստ իր ընկերոջ.

«— Այս ամէնը ձեզի համար ըրի, պարո՞ն:
Դուք իվանն էք հիմա, իմ սպասաւորս: Միայն
մէկ պայման առար համար: Զայխի խօսիք երբէք
հետա ոչ չնորհակալութիւն յայտնելու և ոչ ալ ու-
րիշ բանի մը համար:

«Անձմանօթը յօժարեցաւ, առանց բառ մը իսկ
արտասանելու:

«Վայրաշարժը կամդ առաւ: Համազգեստներ
հազած պաշտօնեաներ այցելեցին վակօնը:
Կոմունին ցաց տուաւ անոնց իր թուղթերը և ակ-
նարկելով իր գէմ նստած մարդուն, ըստ.

«— Աս ալ իմ սպասաւորս է, իվանը, որուն
անցագիրն ալ ահսւասիկ քովս է:

Կառախումբը շարունակեց ձամբան:

«Ամբողջ գիշերը լուսցուցին, գլուխ գլխի, եր-
կուքն ալ համը և անփօս...»

«Առաւան, երբ գերմանական կայարան մը հա-

սան, անձանօթը վար իջաւ և յետոյ դրան վրայ
երեւցաւ:

«— Եերեցէ՛ք, տիկին, խոսառմա դրժելուս
համար: Բայց չէ՞ որ ես ձեր սպասաւորն եմ, բա-
նի մը պէտք չունի՞ք:

«Կոմունին պաղ ձայնով մը պատասխանեց:

«— Գնա՞՝, սենեկապսնուհիս վնասոէ:

«Մարդը աներեւոյթ եղաւ:

«Երբ կոմունին ալ քիչ ետք վար կ'իշնէր, կը
նշմարէր զան որ հեռուէն զինք կը զիտէր:

«Մանթօն հօտան:

Բժիշկը կեցաւ վայրկեան մը և ասրա չարու-
նակեց:

«Օր մը երբ զբաննուակին մէջ յաճախորդներ
կ'ինդունէի, մարդ չէ՞ նեռու մասու և բաւ:

«— Բմի՛շկ, կոմունի Մասի Բառանօվի մա-
սին ձեզմէ նոր անդեկո թիւններ առնելու եկած
եմ....

«Պատասխանեցի:

«— Կոմունին կորուած է այլեւս Ռուսա-
տան չպիտի վերադառնայ:

«Մարդը սկսաւ հեծկլտալ և ապա ոտքի ելտ-
ու մեկնեցաւ զինովի մը պէս գլուխելով:

«Երիկունը անզեկանցացի կոմունին թէ օտա-
րական մը եկած ու իր առողջութեան մասին անդե-
կութիւն ուղած էր ինձմէ:

«Կոմունին սիրալիր կերպով ժպտեցաւ ու պատ-

մեց այն ամէնը զոր ձեզի ըսի, ու աւելցուց .

«Այդ մարդը, զոր երբէք չեմ ճանչնար, իմ՝ անբաժան շուքս է եղած : Միշտ իրեն կը հանդիպիմ, երբ դուքս կ'ելլեմ, օտարի մը պէս կը դիմէ զիս, սակայն բնաւ հետա չէ խօսած :

«Հոս կոմսուհին պատուհանէն դուրս նայեցաւ և յարեց .

— Նայեցէ՞ք: կարծեմ պատուհանիս տակ կը պատի հիմա:

«Ոտքի ելաւ, գնաց բացաւ վարագոյրը և արդարեւ տեսանք այն մարդը որ առառւն ինձի եկածէր, նստարանի մը վրայ նստած էր, աչքերը ստուգոկին սեւեռուն:

«Ինքն ալ մեղ նշմարեց, ոտքի ելաւ և ոչ իսկ անգամ մը ետին նայելով հեռացաւ,

Ամէն օր կուգար ինձի հարցնելու .

«Ինչպէս է . . .

«Եւ դառնապէս կուլար, ամէն օր աւելի ևս ակարացած ու դալկացած գէմքը տեսնելով:

«Կոմսուհին յաճախ կ'ըսէր ինձի .

« — Միայն մէկ անգամ խօսած եմ այդ մարդուն հետ և կը կարծեմ թէ քսան տարուան ծառնօթներ ենք իրարու:

«Երբ իրարու կը հանդիպէին, կոմսուհին զայն կը բարեւէր ծիծաղով մը . . .

«Յաճախ, իր հրամագութեան երկար ժամերուն կոմսուհին կը բանար վարագոյրը, նայելու համար թէ արդեօք հա՞ն է ան: Երբ նշմարէր զայն, նստա-

րանէն կ'ելլէր, կը վերադասնար անկողին, ժպիտը շրթունքներուն վրայ:

«Առառւ մին ալ, ժամը տասնին, կամսուհին մեռաւ: Մինչ պանդովէն զուրս կ'ելլէր, եկաւ անդարձեալ, խռոված գէմքով մը: Դիտէր արդէն եւ դելութիւնը:

« — Կուզեմ տեսնել, մէկ վայրկեան, ձեր ներկայութեան, լսաւ:

«Բազուկէն բանած՝ ներս մտցուցի:

«Երբ մեռելին անկողնոյն առջեւ հասսու բանեց անոր ձեռքը և քարացաւ պահ մը, և յետոյ խենթի պէս փախաւ . . .

Բժիշկը հոս դարձեալ լոեց և ապա շարունակեց.

— «Ահաւասիկ կառախումբի եղական արկած մը որ ևս զիաւեմ: Պէտք է ըսել որ մարդիկ ծիծաղելի խենթեր են, անմիտներ . . .

Կին մը մրմնջեց մեզմ ձայնով .

— Այդ երկու էակները, ձեր կարծածին պէս ինսդիր չէին, անոնք . . . ա՞ն, անոնք . . . էին . . .

Զիրցաւ այլեւս շարունակել, կուլար դառնօրէն:

Ու խօսակցութիւնը կը փոխէին, զայն հանգարանեցնելու համար . . . չէին կրցած հասկնալ թէ ինչ ըսել կուզեր այդ կինը . . .

ՄԵՇԵՆԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Քերէ՛ բասերն արձարեալ, բերէ՛ զինին, աղջիկ-
նի՛, Յայգասօնը ցնծերզենի, արեւելին նոն կը շիկնի,
նոր արզանդէն անհունին Աստուածն ահա լուսահեր,

Փառքովն անհառ կ'ամբառնայ կապոյց ծովեն ծի-
րանի:

Աչքերուն մեջ արեւներ, մազերն համակ հրածոր,
Վիշապախաղ պայտարէն կուգայ Աստուածն յաղ-
րական
Օ՛Շ, բող ջաներն առկայծին, փառք Բագինին մե-
ծազօր,

Փա՛ռք կոխին կենաւտու, բաղիսումներուն ուժգ-
նական:

Աչքերուն տակ խաւարն է, անդունդներն ուր բա-
փեցան,

Կոխին մեջ յաղրահար ոզիները դիւային.
Օրինեալ ըլլաս մեծ Աստուած, ողո՞յն Աւմիդ յաւի-
շեան,

Բերկ' գինին, աղջի՛կներ, ծափ տան, փառք տա՛ն
յաղորողին,
Զարնենիք բամբիո, ու ծնծղայ. Երգենիք նոր երգ ու
նոր կեանք.

Երկրպագենիք դիցական վեն ծնունդին՝ Երկինին.
Մեռի՛ խաւար, մենք, Լոյսի, ճշմարտութեան կը
բաղձանք,

Կեղծին ինկաւ առ յաւես, փառք Վահագնին հր-
շեղեն:

Բերկ' բասերն արծարեալ, բերկ' գինին, աղջիկներ,
Յայզասօնը ցնծերգենիք, արեւելին հոն կը ժիկնի.

Խոր արտանդին անհոնդին Աստուածն անա յուսահներ,
Փառքովն անհառ կ'ամբառնայ կապոյց ծովեն ծի-
րանի:



ՀՀ Ազգային գրադարան



NL0396662

7854